



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒԻ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
Հեռ.՝ (254) 2-22-41, 2-25-77, էլ. փոստ՝ tashir.lori@mta.gov.am

N 2161-19
25 նոյեմբեր 2019թ.

ԼՈՌՈՒԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Կից ուղարկում ենք ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի NN 1198-Ա-1201-Ա որոշումները:

Առդիր՝ 6 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

Կատարող՝ Ն. Մոլոյան
հեռ.՝ 0254-2-21-68



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2019 թվականի N 1198-Ա

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետը, 48-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Սերգեյ Խալոյի, Սեդա Գերմանի, Էդուարդ Սերգեյի Շամոյաններին ընդհանուր համատեղ սեփականությանի ռավունքով պատկանող բնակարանին / անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ N1725746 տրված՝ 06.09.2008/ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Դպրոցականների փողոց, մաս թիվ 13/14 բնակարան թիվ 2 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 9, Դպրոցականների փողոց, ք/2 13/1, բնակարան թիվ 2 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2019թ. նոյեմբերի 18
ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 նոյեմբերի 2019 թվականի N 1199-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔ, ԿԻՐՈՎԻ
ՓՈՂՈՑ 170 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՄՎՈՂ ՏՆԱՄԵՐԶ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ և ԲԱԺԱՆՎԱԾ ԳՈՒՅՔԵՐԻՆ
ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով քաղաքացի Կարեն Վարազդատի Ղազարյանի (անձնագիր AM0656842, տրված 29.02.2012թ.) դիմումը, 29.12.2007թ. կազմված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2460783 վկայականը, «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱԶ-ի կողմից կազմված հատակագիծը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 11-րդ և 13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով, նկատի ունենալով, որ ինքնական կառույցները իրականացվել են 2015թ-ին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր քաղաք, Կիրովի փողոց, թիվ 170 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0103-0002) Կարինե Համազասպի Ղազարյանին, Վարազդատ Նապալի, Կարեն Վարազդատի և Արմեն Վարազդատի Դումիկյաններին սեփականության իրավունքով պատկանող 0,1հա տնամերձ հողամասում ինքնական կառուցված 31,68քմ ընդհանուր մակերեսով պարիսպները ճանաչել օրինական:
2. Ինքնական կառուցված կառույցները ճանաչել օրինական՝ համաձայն «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱԶ-ի կողմից կազմված և Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
3. Կառույցները չեն խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական

խախտումների, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Պարտավորեցնել Սերյոժա Սեմյոնի Սերոբյանին սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում օրինականացված կառույցների համար համայնքի բյուջե վճարել՝ 17430 (տասնյոթ հազար չորս հարյուր երեսուն) ՀՀ դրամ

5. 60 օրյա ժամկետում սահմանված գումարը համայնքի բյուջե չվճարելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

6. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի, ք. Տաշիր, Կիրովի փողոց, թիվ 170 հասցեում գտնվող՝ համաձայն կազմված բաժանման հատակագծերի, բաժանվող գույքերին տրամադրել նոր փոստային հասցեներ՝

1) 0,06004հա մակերեսով հողամասին և շինություններին՝ ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 5-րդ թաղամաս Երևանյան փողոց թիվ 170 բնակելի տուն:

2) 0,03996հա հողամասին և շինություններին՝ ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 5-րդ թաղամաս Երևանյան փողոց թիվ 170/2 հողամաս:

7. Սույն որոշումից ծագող իրավունքներն ու փոփոխությունները ենթակա են պետական գրանցմանը ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2019թ. նոյեմբերի 20
ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 նոյեմբերի 2019 թվականի N 1200-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տաշիրի համայնքապետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից ՀՀ Լոռու մարզ, Վանաձոր քաղաքի բնակիչ Էդգար Սամվելի Մեհրաբյանի կողմից Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 162 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով 2019 թվականի հոկտեմբերի 7-ին կազմած արձանագրությունը 2/1 և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասով, 219. 1-րդ հոդվածով, 23-րդ հոդվածի 2-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ պարբերություններով, 37-րդ 281, 282 և 283 հոդվածներով, «Վարչարարության հիմունքների կ և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

1. ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Աղայան փողոց, շենք 80, թիվ 40 հասցեի բնակիչ Էդգար Սամվելի Մեհրաբյանին ենթարկել վարչական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը կատարելու համար և նշանակել տուգանք 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ:
3. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305 -րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275081298 հաշվարկային հաշվին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
3. Որոշումն ուժի մեջմտնելու օրվանից հետո կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչական հիմունքների կ

վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով վայել ենթակա է հարկադիր կատարման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2019թ. նոյեմբերի 20
ք.Տաշիր



*արքայազն
Հրջեզար Բախչաթյան
ՎԱԿՆԻ
21. 11. 19*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 նոյեմբերի 2019 թվականի N 1201-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶՎԱԾ
ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912 -Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2019թվականի նոյեմբերի 19-ի «ինքնակամ կառուցված, համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված գույքը օտարելու մասին» N 92-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- 1 Համայնքային սեփականություն հանդիսացող ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 6-րդ թաղամաս, Երևանյան փողոց, թիվ 187/1 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 30,46 քմ մակերեսով արտաքին չափերով խանութի և դրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրի հասարակական կառուցապատման 36,05 քմ մակերեսով հողամասը ուղղակի վաճառքով օտարել ինքնակամ կառույցն իրականացնող Արա Հրաչյայի Տոնոյանին:
2. Պարտավորեցնել Արա Հրաչյայի Տոնոյանին մուծելու հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 8000 (ութե հազար) ՀՀ դրամ, խանութի վաճառքի արժեքը՝ 178452 (հարյուր յոթանասունուրե հազար չորս հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2019թ. նոյեմբերի 22
ք. Տաշիր